ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՀԱՅ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԸ*

Սամվել Պողոսյան

Բանալի բառեր՝ հայ ռազմագերիներ, Առաջին աշխարհամարտ, Հայկական լեգեոն, հայկական կամավորական բանակ, ռազմագերիների ճամբարներ:

Առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1918թ.) շուրջ կես միլիոն հայեր զորակոչվել էին Անտանտի և Քառյակ դաշինքի երկրների բանակներ: Օսմանյան բանակի հայ զինվորները հիմնականում դարձան ցեղասպանության առաջին զոհերը: Բացի օսմանյան և ռուսական բանակներից՝ զգալի թվով հայ զինվորներ կային բուլղարական, ֆրանսիական, ամերիկյան բանակներում: Հայ զինվորը բարձր մարտունակություն էր ցուցաբերում ամենուրեք: Նրանց մասին մինչև ցեղասպանությունը սկսելը բարձր կարծիք էր հայտնում նույնիսկ օսմանյան ռազմական նախարար Էնվերը [1]:

Համաշխարհային պատերազմի լայնամասշտաբ ռազմական գործողությունների արդյունքում միլիոնավոր զինվորներ էին գերվում և հայտնվում բավական ծանր պայմաններում: Հազարավոր հայ զինվորներ նույնպես գերվել և հայտնվել էին հակառակորդ երկրների ռազմագերիների ճամբարներում:

Ուսումնասիրության նպատակն է որոշ չափով բացահայտել ու լուսաբանել հայ ռազմագերիների թիվը և վիճակը այդ ճամբարներում: Խնդրի ամբողջական ուսումնասիրությունը չափազանց ծավալուն և խորքային հետազոտություն է պահանջում: Մեր հոդվածը հիմնված է Հայաստանի ազգային արխիվի որոշակի նյութերի, Ֆրանսիայի արխիվային հրատարակված փաստաթղթերի, որոշ հուշագրությունների ու ուսումնասիրությունների աղբյուրային հենքի վրա: Թեման հետագա ավելի խորքային ու ընդարձակ ուսումնասիրության կարիք ունի:

Պատերազմի տարիներին բազմաթիվ հայեր հայտնվել էին Հնդկաստանի, Եգիպտոսի, Ռուսաստանի, Սերբիայի, Ալժիրի, Ավստրո-Հունգարիայի ռազմագերիների ճամբարներում: Անտանտի երկրների ճամբարներում հայտնված հայ ռազմագերիները բավական ծանր վիճակում էին այն պատճառով, որ թշնամի էին դիտվում թե՛ հակառակորդ երկրի, թե՛ իրենց հետ գերված թուրք, բուլղար կամ գերմանացի զինվորների կողմից: Ռազմագերիները Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջոցով որոշակի աջակցություն էին ստանում Քառյակ պետությունների կողմից, սակայն հայերը զրկված էին դրանից:

Ռազմագերու կարգավիճակից դուրս գալու հնարավորություն հայերի համար ստեղծվեց 1916 թ. վերջերից, երբ Կիպրոսում ֆրանսիական իշխանությունների կողմից սկսեց կազմավորվել Հայկական լեգեոնը: Անտանտի ռազմագերիների ճամբարներում հայտնված հայ զինվորները պատեհ առիթ ստացան ազատվելու այդ ճամբարներից և իրենց մարտական ունակությունները ծառայեցնելու հայրենիքի ազատագրության վեհ գաղափարին: Պետք է նշել, որ հայ ռազմագերիների ճնշող մեծամասնությունը ցանկություն հայտնեց միանալու հայկական այդ կամավորական բանակին:

Օսմանյան բանակի հարյուրավոր հայ զինվորներ Միջագետքի և Պաղեստինի ռազմաճակատներում գերվել էին բրիտանացիների կողմից: Նրանք հիմնականում տեղափոխվել էին Հնդկաստանի ռազմագերիների ճամբարներ: Ֆրանսիան դիմեց բրիտանական իշխանություններին, որ հայազգի ռազմագերիները իրավունք ստանան միա-

---

* Հոդվածն ընդունվել է 12.02.2019:
Հոդվածը տպագրության է երաշխավորել «Լրատու»-ի գլխավոր խմբագիր, պ.գ.թ., դոցենտ Ա. Վարդանյանը:
Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ թեմատիկ հայտի (18T-6A068 «Հայկական զինուժը 1914-1920 թթ.») շրջանակներում:

նալու Կիպրոսում նոր կազմավորվող հայկական կամավորական բանակին: Մեծ Բրիտանիայի Հնդկաստանի գործերով նախարարությունը 1916 թ. հոկտեմբերի 24-ին տալիս է իր համաձայնությունը, Հնդկաստանում ներկայլված հայ ռազմագերիները միանային Հայկական լեգեոնին [2]:

Եգիպտահայ թեմի առաջնորդ Թորգոմ արք. Գուշակյանը 1916 թ. վերջին մեկնեց Բոմբեյ, որպեսզի Հնդկաստանում բանտարկված թուրքական բանակի հայ ռազմագերիներին ներկայացնի հայկական լեգեոնը և նրանց առաջարկի կամավորագրվել այդ զորամասին [3]: Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասում գտնվող Սումերպուրի ճամբարում արգելափակված էին 165 հայ ռազմագերիներ: 1916 թ. դեկտեմբերի 26-ին Թորգոմ արք. Գուշակյանը հանդիպեց նրանց հետ: Բոլորը ցանկություն հայտնեցին միանալու լեգեոնին [4]: Որպեսզի հնարավորինս մեծաքանակ հայկական զորամաս կարողանան կազմավորել Կիպրոսում, Ֆրանսիական իշխանությունները որոշեցին Հնդկաստանի բոլոր հայ ռազմագերիներին տեղափոխել Եգիպտոս [5]: Ֆրանսիան նպատակ ուներ գրավելու Կիլիկիան և Սիրիան, սակայն այդ ուղությամբ գործելու համար բավարար ռազմական ուժեր չուներ, հետևաբար իր ծավալապաշտական ծրագրերի իրականացման համար ձգտում էր օգտվելու հայկական զինուժից: Հայկական կողմը, իր հերթին, նպատակ ուներ Ֆրանսիայի աջակցությամբ ազատագրվել թուրքական դաժան լծից և ձեռք բերել ինքնավարություն Կիլիկիայում:

1917 թ. հունվարի 20-ին Եգիպտոսում բրիտանական գերագույն կոմիսար գեներալ Ռեգինալդ Վինգեյթը Կահիրեում ֆրանսիական դեսպան Ժյուլ Դեֆրանսին տեղյակ պահեց, որ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ը համաձայն էր Հնդկաստանում գտնվող հայ ռազմագերիների լեգեոնին միանալուն, իսկ ինքն արդեն հեռագրել էր Հնդկաստանի փոխարքա Ֆրեդերիկ Շելմսֆորդին, որպեսզի տեղեկացնի հայերի ուղարկման ամսաթիվը [6]:

Միջագետքի և Պաղեստինի ռազմաճակատներում բրիտանացիների կողմից գերված թուրքական բանակի գրեթե բոլոր հայ զինվորները, որոնք պիտանի էին ծառայության համար, զինվորագրվեցին Հայկական լեգեոնին: Նրանք կազմեցին հայկական լեգեոնի ամենամարտունակ մասը: Լեգեոնի հրամանատար Լուի Ռոմիոն և ֆրանսիական գեներալ Մորիս Բայուն միայն գովասանքով էին խոսում նրանց կարգապահության և մարտական որակների մասին [7]: Դա պայմանավորված էր նրանով, որ օսմանյան բանակի նախկին հայ զինվորները արդեն իսկ զինվորական պատրաստվածություն էին անցել, ինչպես նաև մասնակցել էին ռազմական գործողություններին ու մարտական փորձ էին ձեռք բերել:

Պատերազմի վերջնափուլում օսմանյան բանակի Պաղեստինյան ռազմաճակատում դեռևս որոշակի թվով հայազգի զինվորներ կային: 1918 թ. սեպտեմբերի 19-26-ը տեղի ունեցած Մեգիդոյի ճակատամարտում, երբ օսմանյան երեք բանակները գլխովին ջախջախվեցին, գերի ընկան նաև գերմանական ու թուրքական բանակներում ծառայող բազմաթիվ հայ զինվորներ: Ալեքսանդր Այնթապլյանի վկայությամբ՝ հայ ռազմագերիները հայտնվել էին բավական ծանր վիճակում: Նա 1917 թ. հունիսին Մարաշի գերմանական միսիոներական դպրոցն ավարտելուց հետո 10 հայ այլ տղաների հետ զորակոչվել էր գերմանական բանակ: Սկզբում նրանք պարեկային ծառայություն էին կատարել Կիլիկիայով անցնող Բեռլին-Բաղդադ երկաթուղագծի մոտ: 1918 թ. օգոստոսին նրանք ուղարկվել էին Պաղեստինյան ճակատ, ուր սեպտեմբերի 21-ին նա գերվել էր Աֆուլայում: Նա վկայում է, որ հայերին, հույներին, հրեաներին բրիտանացիները միացնում էին թուրք ռազմագերիներին, իսկ եվրոպացիներին առանձին և ավելի լավ պայմաններում էին պահում: Ա. Այնթապլյանին դժվարությամբ էր հաջողվել մնալ գերմանացիների մեջ, այն էլ մորեղբոր՝ բրիտանական գաղտնի ծառայության սպա, պրոֆեսոր Հարություն Մուրադյանի անունը տալուց հետո [8]:

Զգալի թվով օսմանյան բանակի հայ զինվորներ գերեվարվել էին նաև ռուսական բանակի կողմից: Ռուսաստանում հայտնված հայ ռազմագերիներին ազատ արձակելու հարցով Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը դեռևս 1914 թ. նոյեմբերին անձամբ դիմել էր Նիկոլայ II կայսրին, իսկ դեկտեմբերին՝ Կովկասի փոխարքա Իլլա-

րիոն Վորոնցով-Դաշկովին: Նա առաջարկում էր հայ ռազմագերիներին հնարավորություն տալ կռվելու ռուսական բանակի շարքում[9]: Քանի որ ռուսական իշխանություններին ուղղված նախորդ դիմումներն անպատասխան էին մնացել, կաթողիկոսը 1915 թ. հոկտեմբերի 15-ին խնդրում է Ռուսաստանի պետական դումայի պատգամավոր Միքայել Պապաջանյանին, որպեսզի օգտագործի իր լծակները [10]:

Կաթողիկոսին ռազմագերիների ուղարկած նամակներից տեղեկանում ենք, որ 1915 թ. նոյեմբերին Բաքվի մոտ գտնվող Նարկին կղզում գտնվում էին 170 հայ ռազմագերիներ: Նրանց թուրքերի հետ էին պահում: Իսկ 24 հույներին ազատ էին արձակել: 1916 թ. վերջին Պրիմորսկի մարզի Ռազդոլնայա ավանում կար 83, Սպասկայա գյուղում՝ 100, Զաբայկալսկի մարզի Նիժնի Բերյոզովկա գյուղում՝ 115, իսկ Բերյոզովկա գյուղում՝ 320, Ուֆայում՝ 150 հայ ռազմագերի: Բավական մեծ թվով հայեր մահացել էին չափազանց ծանր կենցաղային պայմանների պատճառով: Օրինակ՝ Բերյոզովկայի 350 հայերից 30-ը մահացան մեկ տարվա ընթացքում: Սնունդը անբավարար էր, հանդերձանքը մաշված, իսկ օգնություն ոչ մի տեղից հայ ռազմագերիները չէին ստանում: Արդեն 1915 թ. սլավոնական ծագման գերիներն ազատ էին արձակվել, իսկ 1916 թ. ապրիլից գերմանացի և ավստրիացի ռազմագերիները ազատ ապրելու և աշխատելու իրավունք ստացան: Միայն հայերն ու թուրքերն էին պահվում ճամբարներում: Ռուսական կարմիր խաչի ընկերությունը հայերին օգնություն ցույց չէր տալիս՝ նշելով, որ կարող են դիմել ավստրիական կարմիր խաչին, իսկ վերջինս էլ հրաժարվում էր՝ պատճառաբանելով, որ հայերը ռուսների բարեկամներն են: Թուրք և գերմանացի ռազմագերիները թշնամաբար էին վերաբերում հայերին՝ համարելով թշնամի և մահվան արժանի [11]: Արևմտահայ փախստականների հանձնաժողովի հաշվարկներով՝ 1916 թ. դեկտեմբերին Սիբիրում կային 2.000 հայ ռազմագերիներ[12]:

Այսպիսով՝ չնայած դեռևս 1914 թ. նոյեմբերից Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսը, Ռուսաստանի պետական դումայի պատգամավոր Միքայել Պապաջանյանը և այլ գործիչներ բազմիցս դիմել էին ռուսական կայսրին ու իշխանություններին, որպեսզի հայ ռազմագերիներն ազատ արձակվեին, կամ բարելավվեր նրանց վիճակը, սակայն դրանք արդյունք չէին տվել: Նրանք շարունակում էին գտնվել ծայրահեղ ծանր վիճակում:

1916 թ. հոկտեմբերի 27-ին Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի, բրիտանացի դիվանագետ Մարկ Սայքսի և ֆրանսիացի դիվանագետ Ժորժ Պիկոյի միջև Հայկական լեգեոնի կազմավորման վերաբերյալ ստորագրեցին համաձայնագիր, որի առաջին բաժնի երկրորդ կետը նախատեսում էր. «Ժ. Պիկոն և Մ. Սայքսը անհրաժեշտ քայլեր էին ձեռնարկելու Ռուսաստանի կառավարության մոտ, որպեսզի ապահովեին Սիբիր աքսորված արևմտահայ ռազմագերիների և Կովկասի արևմտահայ գաղթականների կամավորագրությունն ու մեկնումը» [13]: Սակայն ռուսական կողմը այդպես էլ իր համաձայնությունը չտվեց, որ Ռուսաստանում գտնվող հայ ռազմագերիները տեղափոխվեին Հայկական լեգեոն:

1917 թ. մարտի 23-ին Գևորգ Ե կաթողիկոսը դիմեց Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությանը՝ խնդրելով՝ «Կարգադրել անմիջապես ազատել այն բոլոր հայ գերիներին, որոնք տանջվում են Սիբիրում և Ռուսական պետութեան զանազան վայրերում, իբրև այնպիսի անձանց, որոնք կամաւոր կերպով իրենք իրենց յանձնել են ռուս քրիստոսասէր զօրքին» [14]: Ռուսաստանի հայ ռազմագերիների խնդիրը այդպես էլ լուծում չգտավ ռուսական իշխանությունների կողմից, իսկ հոկտեմբերյան հեղափոխությունից հետո երկրում ստեղծված խառնակ վիճակում հայ ռազմագերիներից շատերը ստիպված էին ներքաշվելու քաղաքացիական կռիվների հորձանուտի մեջ:

Հարյուրավոր հայեր զորակոչվել էին նաև բուլղարական բանակ: Պետք է նշել, որ թուրքերի իրականացրած ցեղասպանությունից հետո Քառյակ դաշինքի անդամ երկրների բանակներում ծառայող հայերը դժկամությամբ էին իրենց պարտքը կատարում: Օգտվելով դրանից՝ Մակեդոնական ռազմաճակատի Անտանտի դաշնակցային ուժերի

հրամանատարությունը դեռևս 1916 թ. վերջերին բուլղարական բանակի հարյուրավոր հայ զինվորների կոչ էին արել հանձնվել՝ խոստանալով առանձնահատուկ վերաբերմունք ցույց տալ և չդիտել որպես ռազմագերի: Հայերից շատերն անձնատուր էին եղել սերբերին, փոքր մասը՝ ֆրանսիացիներին: Չնայած տրված խոստումներին՝ նրանց որպես ռազմագերիներ ընդգրկել էին ծանր աշխատանքների մեջ [15]:

1917 թ. հոկտեմբերի 10-ին ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Ֆրանսիայի ԱԳՆ Արևելքի բաժնի պետ Ժան Գուին նամակով տեղեկացրեց, որ թուրքական ու բուլղարական բանակի հայ ռազմագերիներ կան ներկայված Ագուենում (Կրոզ), որոնք խնդրագիր էին ուղարկել բարելավելու իրենց վիճակը՝ առանձնացնելով թուրք ու բուլղար ռազմագերիներից, քանի որ վերջիններս թշնամաբար էին վերաբերվում հայերին: Միաժամանակ հայ ռազմագերիներից 6-ը խնդրում էին իրենց ընդգրկել Հայկական լեգեոնի շարքերը [16]: Չնայած տված խոստումներին՝ ֆրանսիական իշխանությունները երկար ժամանակ չլուծեցին այդ հարցը:

Պ. Նուբարը 1918 թ. հունվարի 26-ին կրկին խնդրեց ֆրանսիական իշխանություններին՝ թեթևացնել նրանց վիճակը և հնարավորության դեպքում միացնել Հայկական լեգեոնին [17]: Փետրվարի 5-ին Ֆրանսիայի ԱԳ նախարար Ստեֆան Պիշոնը ռազմական նախարարությանը հարցում արեց սերբերի մոտ գտնվող հայ ռազմագերիների ճակատագրի մասին [18]: Արդեն մայիսի 4-ին ռազմական նախարար և վարչապետ Ժորժ Կլեմանսոյի հրամանագրով Մարսելի հայ ազգային միության նախագահ Հովհաննես Սահատճյանին հանձնարարվեց զբաղվել հայ ռազմագերիներին հայտնաբերելու և Հայկական լեգեոնին կամավորագրելու հարցերով [19]:

1918 թ. մայիսի 25-ին Ժ. Կլեմանսոն տեղեկացրեց Ս. Պիշոնին, որ Մակեդոնիայում դաշնակցային բանակների գլխավոր հրամանատար գեներալ Ադոլֆ Գիյոման հայտնել էր, որ սերբերը բոլոր դասալիքներին հանձնել են ֆրանսիացիներին: Սերբերի մոտ ռազմագերու կարգավիճակով հայտնվել էին 39 հայեր, որոնցից 4-ը դեռևս 1916 թ. օգոստոսին իրենց իսկ խնդրանքով ընդգրկվել էին սերբական բանակի մեջ: Մյուս հայ ռազմագերիներին ուղարկել էին տարբեր ճամբարներ, ուր ներգրավվել էին տարբեր ոչ շատ ծանր աշխատանքների մեջ: Գեներալը տեղեկացրել էր, որ այդ հայերից ոչ մեկը Հայկական լեգեոնում ընդգրկվելու համար չէր դիմել, միևնույն ժամանակ սերբական իշխանությունները հակված էին նրանց պահելու բանակում՝ աշխատուժի պակասի պատճառով [20]: Այսպիսով՝ հայ ռազմագերիներին շատ դեպքերում ցանկանում էին օգտագործել որպես բանվորներ, հետևաբար՝ դաշնակցային հրամանատարությունները ամենատարբեր պատճառաբանություններ էին առաջ քաշում կամ խոչընդոտներ էին ստեղծում հայ զինվորներին լեգեոն տեղափոխելու գործընթացին խանգարելու համար:

Մարսելի հայ ազգային միության ներկայացուցիչները, որոնք բուլղարական ու թուրքական բանակներից գերված հայերին կամավորագրելու նպատակով մեկնել էին Կորսիկայի, Ալժիրի և Ֆրանսիայի ռազմագերիների ճամբարներ, լուրջ արդյունքներ չարձանագրեցին: Սակայն այդ ուղևորությունների արդյունքում պարզ դարձավ, որ սերբական և չեխոսլովակյան ծագման գերիները օգտվում էին աշխատանքային բարվոք պայմաններից, իսկ հայերը ներգրավված էին ծանր աշխատանքներում: Ազգային պատվիրակության նախագահը 1918 թ. սեպտեմբերի 23-ին Ժ. Գուից պահանջեց հայ ռազմագերիների համար ևս ապահովել բարենպաստ պայմաններ [21]:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ ինչպես ռուսական, այնպես էլ ֆրանսիական համակենտրոնացման ճամբարներում հայտնված հայ ռազմագերիները բավական ծանր վիճակում էին հայտնվել, նրանց ստիպում էին կատարելու ավելի ծանր աշխատանքներ, քան այլ ազգերի ներկայացուցիչների, նրանց թշնամաբար էին վերաբերվում նաև «բախտակից» թուրք, գերմանացի, բուլղար ռազմագերիները:

1915-1917 թթ. բուն Ավստրիայի ռազմական ճամբարներում էին հայտնվել ռուսական բանակի շուրջ 5000 ռազմագերիներ: Այդ հազարավոր ռազմագերիներից 187-ը

հայ զինվորներ էին [22]: Սակայն նրանց մասին առավել մանրամասն տեղեկություններ մեր տրամադրության տակ դեռևս չկան:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ համաշխարհային պատերազմի մասնակից հազարավոր հայ զինվորներ հայտնվել էին ռազմագերիների ճամբարներում: Նրանցից շատերը չափազանց ծանր պայմաններում էին, քանի որ թշնամի էին դիտվում ոչ միայն հակառակորդ երկրի, այլ նաև իրենց հետ գերվածների կողմից: Հայկական լեգեոնի կազմավորումը հնարավորություն տվեց բրիտանական ու ֆրանսիական ռազմագերիների ճամբարներում հայտնված հայ զինվորներին ազատվելու գերու կարգավիճակից, միանալու հայկական կամավորական բանակին և մարտնչելու հայրենիքի ազատագրման համար: Միաժամանակ պետք է մատնանշենք, որ Առաջին համաշխարհային պատերազմի հայ ռազմագերիների խնդիրը հետագա խորքային ուսումնասիրության կարիք ունի: Անհրաժեշտ է ուսումնասիրել պատերազմին մասնակից երկրների արխիվային համապատասխան նյութերը:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Einstein L.**, Inside Constantinople. A Diplomatist's diary during the Dardanelles Expedition, April-September, 1915. New York, 1918, p. 126.
2. **Սարուխանյան Տ.**, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.), Երևան, 2005, էջ 67:
3. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Երևան, 2005, հ. I, էջ 411:
4. **Գուշակեան Թորգոմ** պատրիարք, Ամբողջ երկեր, հ. Զ, Հնդկահայք: Տպաւորութիւններ եւ տեղեկութիւններ, Երուսաղեմ, 1941, էջ 31:
5. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 430:
6. Նույն տեղում, էջ 429:
7. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Երևան, 2005, հ. II, էջ 47:
8. **Kazanjian P.**, The Cilician Armenian ordeal, Boston, 1989, p. 49-53.
9. ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 90, թ. 2-3:
10. Նույն տեղում, թ. 6-7:
11. Նույն տեղում, թ. 5, 8-11, 13-14, 17, 37, 40-41:
12. ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 90, թ. 47-48:
13. Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, p. 396.
14. ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 151, թ. 16:
15. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 156:
16. Նույն տեղում, էջ 40:
17. Նույն տեղում, էջ 156:
18. Նույն տեղում, էջ 290:
19. Նույն տեղում, էջ 285:
20. Նույն տեղում, էջ 290-291:
21. Նույն տեղում, էջ 371:
22. https://www.tomsarkgh.am/hy/event/22091/%D5%85%D5%A1%D5%BD%D5%B4%D5%AB%D5%B6-%D4%B4%D5%B8%D6%82%D5%B4-D4%B9%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%BF%D4%B1%D5%BE%D5%BD%D5%BF%D6%80%D5%AB%D5%A1%D5%80%D5%A1.html

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Առաջին աշխարհամարտի հայ ռազմագերիները
Սամվել Պողոսյան

Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից հազարավոր հայ զինվորներ հայտնվել էին ռազմագերիների ճամբարներում: Նրանցից շատերը չափազանց ծանր պայմաններում էին, քանի որ թշնամի էին դիտվում ոչ միայն հակառակորդ երկրի, այլ նաև իրենց հետ գերվածների կողմից: Հայկական լեգեոնի կազմավորումը հնարավորություն տվեց բրիտանական ու ֆրանսիական ռազմագերիների ճամբարներում հայտնված հայ զինվորներին ազատվելու գերու կարգավիճակից, միանալու հայկական կամավորական բանակին և մարտնչելու հայրենիքի ազատագրման համար:

РЕЗЮМЕ
Армянские военнопленные Первой мировой войны
Самвел Погосян

Ключевые слова: армянские военнопленные, Первая мировая война, Армянский легион, Армянская добровольческая армия, лагеря для военнопленных.

Тысячи армянских солдат, участвовавших в Первой мировой войне, оказались в лагерях для военнопленных. Многие из них находились в экстремальных условиях, поскольку их рассматривали как врагов не только противоборствующая страна, но и пленники. Формирование Армянского легиона позволило армянским солдатам из британских и французских лагерей для военнопленных освободиться от статуса пленника, вступить в армянскую добровольческую армию и бороться за освобождение родины.

SUMMARY
The Armenian War Prisoners of World War I
Samvel Poghosyan

Keywords: Armenian POWs, World War I, Armenian Legion, Armenian Volunteer Army, POW camps.

Thousands of Armenian soldiers participating in the First World War were in POW camps. Many of them were in extreme conditions, as they were seen as enemies not only by the opposing country but also by the captives. The formation of the Armenian legion allowed Armenian soldiers, who appeared in the British and French POW camps, to free themselves from the status of the captive, join the Armenian volunteer army and fight for liberation of the homeland.